ՀԵՆՐԻԿ ՄԵՍՐՈՊԻ ԱՎՉՅԱՆ

Հայաստանի երկրաբանական գիտությունը ծանր կորուստ կրեց։ 1993 թ. նոյեմբերի 24-ին ծանր հիվանդությունից հետո կյանքի 63-րդ տարում Մոսկվայում մահացավ երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր, Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետի երկրաֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր Հ. Մ. Ավչյանը։

Հ. Մ. Ավչյանը ծնվել է 1930 թ. Գորիս քաղաքում։ 1953 թ. գերազանցության դիպլոմով ավարտելով ԵՊՀ երկրաբանական ֆակուլտետի երկրաֆիզիկայի բաժինը, ուսումը շարունակում է Մոսկվայի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետի ասպիրանտուրայում։ 1958 թ. հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական, իսկ 1972 թ. դոկտորական թեզ, ստանալով երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան։ 1983 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում։



Հ. Մ. Ավչյանը ունեցել է բեղուն գիտական և մանկավարժական գործունեություն։ 1956—1979 թթ. աշխատել է Մոսկվայի Համամիութենական երկրաֆիզիկական հետախուզման մեթոդների ինստիտուտում որպես պետրոֆիզիկայի լաբորատորիայի վարիչ և զբաղվել երկրաֆիզիկայի կարևոր պրոբլեմներից մեկի՝ բարձր ճնշման և ջերմաստիճանի պայմաններում լեռնային ապարների ֆիզիկա-մեխանիկական հատկությունների ուսումնասիրմամբ։ Նրա կողմից մշակվել է լեռնային ապարների ֆիզիկական հատկությունների համալիր ուսումնասիրման լաբորատոր մեթոդ և անիզոտրոպ ծակոտկեն միջավայրի ձևավորման տեսությունը։

1979 թ.-ից Հ. Մ. Ավչյանը աշխատանքի է անցնում Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետում, նախ որպես երկրաֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր, իսկ 1984 թ.-ից մինչև 1993 թ.-ը նույն ամբիոնի վարիչ։ Նրա կողմից բարձր մակարդակով կարդացվել են պետրոֆիզիկա, երկրաֆիզիկական աշխատանքների կոմպլեքսավորում և հորատանցքերի ուսումնասիրման երկրաֆիզիկական մեթոդներ դասընթացները։ Նրա գիտական ղեկավարությամբ ութ ասպիրանտ պաշտպանել են թեկնածուական թեզ։ Նա դասախոսական աշխատանքը զուգակցել է գիտականի հետ։ Վերջին տարի-

ներին զբաղվել է պետրոֆիզիկայի նոր խնդրով՝ հնամագնիսական դաշտի ազդեցությունը ապարների ստրուկտուրայի ձևավորման վրա։ Նրա կողմից հաստատվել է, որ արտաքին մագնիսական դաշտը հանդիսանում է ոչ միայն որպես մագնիսացման դաշտ, այլ նաև ապարների ստրուկտուրայի ձևավորման ակտիվ գործոն, այսինքն ազդում է ապարներում հնամագնիսական ստրուկտուրայի տարածական կողմնորոշման վրա (ՀՍՏԿ)։ Ապարների հետագա վարվելակերպը տարբեր ֆիզիկա-երկրաբանական պրոցեսներում կողմնորոշվում է այդ ստրուկտուրայով։ ՀՍՏԿ-ի երևույթի հիման վրա Հ. Մ. Ավշյանի կողմից մշակվել է ապարների կոտրատման կանխագուշակման մեթոդ, տարածության մեջ ճեղքավորման խզումների և ձևախախտումների համակարգային տեղաբաշխման հիմքերը, երկրաֆիզիկական դաշտերի անիզոտրոպիայի սահմանները և այլն։

Հ. Մ. Ավշյանը ավելի քան 10 տարի եղել է նախկին ԽՍՀՄ ԳԱ-ին կից երկրամագնիսականության, ԳԱ երկրակեղևի և վերին մանթիայի ուսումնասիրման, երկրաբանության նախարարության պետրոֆիզիկական ուսումնասիրությունների միջգերատեսչական հանձնաժողովի գիտական խորհրդի անդամ, իսկ 1981 թ.-ից Հայաստանի Հանրապետության գիտության և բարձրագույն կրթության նախարարության «Երկրաբանություն, երկրաֆիզիկա և լեռնային գործ» գիտական սեկցիայի նախագահ։

Հ. Մ. Ավշյանը հանդիսանում է հարյուրից ավելի գիտական հոդվածների, այդ թվում շորս մենագրությունների և տասանյակ գիտա-արտադրական հաշվետվությունների հեղինակ։

Հ. Մ. Ավշյանը մեծ հարգանք է վայելել ֆակուլտետում և համալսարանում ու թողել բարի համբավ։ Նրա հիշատակը միշտ վառ կմնա նրա գործընկերների և աշակերտների մոտ։

Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետ, ՀԱԱ Գյումրիի երկրաֆիզիկայի ու ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ,